Պատասխաններ - 11-րդ դասարան

1. Կապուտաչյա լճակը՝ չգիտես որ ժամանակներից երկրի վրա հայտնված, ասես լաջվարդ ***երկնքից*** պոկված մի կտոր լինի. նա, մեղմ զեփյուռի ***զգվանքից*** հուզված, մանրակոհակ ելևէջներով նազում է՝ ապշեցնելով չնաշխարհիկ իր ***գեղեցկությամբ***: Ափամերձ տները՝ երկհարկանի կամ եռահարկ, իրենց դողդոջուն ստվերներն են գցել մաքրափայլ ալիքների մեջ, ու նրա՝ ***աչք շոյող*** հայելանման հայացքը անդրադարձնում է շրջակա ամեն ինչ. սաղարթախիտ ծառերը, ծաղկազարդ ճեմուղիները՝ ձյունաճերմակ շուշաններով եզերված, և զովասուն տաղավարները, գրկաբաց ընդունելով ***ամենքին***, փորձ են անում ***մեղմելու*** ամռան՝ մինչև քառասուն աստիճան հասնող տապը: Թվում է՝ այս ամենն անձեռակերտ կտավ է՝ անտես ***նկարչի կողմից*** ստեղծված:

Լճակի արևելյան ափի դիմաց արձանացած լեռան փեշին ***փռված*** է հինավուրց մի ավան, ***ուր*** ժամանակն անցնում է խաղաղ կարգով, և ավանի կյանքը՝ կախարդական ժամացույցի պես մի անգամ լարված, հարատևում է մաթեմատիկական ճշգրտությամբ: ***Ոչինչ*** չի խախտում նրա անդորր առօրյան. լճակը վետվետում է մեղմ, ծառուղին՝ նիրհում՝ թուփ ու սաղարթի սոսափով արբած, ու տների տանիքներին լուռ փշրվում են արեգակի ոսկեդեղձան շողերը:

Ի՜նչ գողտրիկ, հիանալի անկյուն:

2.**Երկնքից**- անջատման խնդիր, **զգվանքից**- պատճառի պարագա, **գեղեցկությամբ**- միջոցի խնդիր, **աչք շոյող**- որոշիչ, **մեղմելու**- հատկացուցիչ, **ամենքին**– ուղիղ խնդիր, **նկարչի կողմից**-ներգործող խնդիր, **փռված**-ստորոգելի, **ուր**-տեղի պարագա, **ոչինչ**- ենթակա,

3. համաձայն ասածին-համաձայն ասածի, ամսեկան-ամսական, նրանք ինքները-նրան իրենք, մի՛ փախչիր-մի՛ փախիր, ամենից շքեղագույն-շքեղագույն/ ամենից շքեղ, հոգնացրեց-հոգնեցրեց, լվացի՛ր-լվա՛, ըստ օրենքով-ըստ օրենքի, կթռնեն-կթռչեն, առանց թույլտվություն-առանց թույլտվության

4. հանգման խնդիր, տեղի, ժամանակի, նպատակի պարագաներ:

5. լատինական այբուբեն, տիկնանց տիկին, Հայրենական մեծ պատերազմ, Արաբական պետությունների լիգա, Ղուկաս առաքյալ, Թաիլանդի Թագավորություն, Կիլիկիայի թագավորություն, արևելքի մարգարիտ, Հեռավոր Արևելք, Բերմուդյան եռանկյունի, Առաջին աշխարհամարտ, երկաթի դար, Մայր Թերեզա, Հին Հունաստան, Կատարի Պետություն, Մշո Սուրբ Առաքելոց վանք, Չինական պարիսպ, սլավոնական լեզուներ, Սուրբ Սարգիս, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն

6.Մթագնել՝ ա) մթնել, խավարել, բ) մութով պատվել՝ծածկվել, գ) ամպով՝մշուշով պատվել, դ) մռայլվել, խոժոռվել, ե) գիտակցությունը թուլանալ՝ մշուշվել, զ) գիտակցությունը թմրեցնել, է) խոժոռ՝մռայլ դարձնել

7. **բասրանք**-պարսավանք, նախատինք, **նշավակել**- ծաղրի ենթարկել, նախատել, **փերեզակ**- չարչի, մանրավաճառ, **նանրախոս**-դատարկախոս, **փերթ**-պատառ, կտոր, ծվեն, քուրջ, **հագագ**-շունչ, հնչյուն, ձայն, բացականչություն, **խոչ**-ճանապարհին ոտքին դիպչող խութ՝ քար, արգելք, **տիվանդորր**-ցերեկվա անդորր, **ազոխ**-չհասած խակ խաղող, խակ պտուղ, **դրասանգ**–թարմ ոստերից և ծաղիկներից կազմված հյուսակ, ծաղկաշղթա:

Գնահատման չափանիշներ – 11-րդ դասարան

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 3 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր: